

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄԸ ԵՒ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԱՆԱԻԱՐՏ ՕՊԵՐԱՆ

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ
avardumyan8@gmail.com

ՄՈՒՏՔ


Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութիւնների ժողովածուի առաջին հատորը լոյս է տեսել 1890ին Մոսկուայում՝ իր մի խումբ բարեկամների օժանդակութեամբ, իսկ երկու տարի անց՝ 1892ին, լոյս է տեսել նոյնի երկրորդ հատորը, որտեղ զետեղուած է նաեւ նրա «Անուշ» պոեմի առաջին տարբերակը¹: Այն Թումանեանի վաղ շրջանի պոեմներից է, որոնց հերոսներին յատուկ է քնարական խորհրդատւորութիւնը: Յետագայում՝ 1901-3ին, հեղինակը հիմնովին վերամշակել է իր պոեմները՝ այդ թում եւ «Անուշ»ը. այդ նոր եւ ստուար ժողովածուն լոյս է տեսել 1903ին Թիֆլիսում, իսկ 1904ին բանասէր Ստեփան Լիսիցեանը «Հայ բանաստեղծներ» մատենաշարով առանձինն վերահրատարակել է *Անուշ* պոեմը²:



Սարդի «Ա՛խ, Անուշ, Անուշ» մեներգը

¹ Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական բառարան, հրք. Ա, «Հայաստան»* հրատ., Երեւան, 1973, էջ 380-81:

² Յովհաննէս Թումանեան, *Անուշ*, «Հայ բանաստեղծներ» մատենաշար, հրատ.՝ Ստ. Լիսիցեանի եւ ընկ., տպարան «Հերմէս», Թիֆլիս, 1904, էջ 3-40:



Անուշի «Ասում են ուրի» մեներգը

Կոմիտասն ընդհանուր առմամբ ունեցել է երաժշտական-բեմական ըստեղծագործությունների չորս մտայղացում՝ «Սասմայ ծոեր», «Վարդան» եւ «Անուշ» օպերաները, ինչպէս նաեւ «Քաղաքավարութեան վնասները» (ըստ Յակոբ Պարոնեանի) երաժշտական կատակերգութիւնը³ (օպերէտը): Սակայն Կոմիտասն ամէնից շատ հասցրել է աշխատել վերոնշեալ օպերաներից հենց «Անուշ»ի վրայ, քանի որ այդ պոեմը շատ հոգեհարազատ էր նրան իր ազգային նկարագրով եւ բնիկ ժողովրդական մտածողութեամբ:

³ Ռոբերտ Աթայեան, «Կոմիտասի ծեռագրերը», *Սովետական արուեստ* 4:1955, էջ 42-47:

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ⁴ ԵՒ ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՆ

«Անուշ» պոեմը հայ գրականության ամենից սիրուած երկերից է, որի հիման վրայ 1912ին ստեղծուել է Արմէն Տիգրանեանի համանուն օպերան⁵: Սակայն յայտնի է, որ մինչ այդ՝ դեռեւս 1903ի վերջերին, լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ, Կոմիտաս վարդապետն արդէն ընթերցել էր Թումանեանի այս պոեմը եւ համակուել դրա յենքով ազգային առաջին օպերան ստեղծելու գաղափարով: Նշելի է, որ Թումանեանի բանաստեղծութիւնների արմատապէս վերամշակուած այս ժողովածուն 1903ին հրատարակուել է հասարակական ու թատերական գործիչ, Թիֆլիսի վերնախաւի անուանի ներկայացուցիչ իշխանուհի Թումանեանի ջանքերով: Դեռեւս անձամբ ծանօթ չլինելով Կոմիտաս վարդապետին, վերջինս իսկոյն ուղարկում է նրան մի օրինակ Թումանեանի նոր հրատարակուած *Բանաստեղծութիւններ* ժողովածուից, որը պարունակում էր նաեւ «Անուշ»ը՝ թելադրելով Կոմիտասին օպերա յօրինել այդ ազգային պոեմի հիման վրայ: Ահա թէ ինչ է պատասխանել նա իշխանուհի Թումանեանին. «Ուրախութեամբ կարդացի պր. Յ. Թումանեանի «Անուշը» եւ շար անուշ գրւոյայ, պատրաստ եմ Ձեր փափագն իրագործելու» (1904, Յունուարի 22): Յետագայում իշխանուհին գրել է Կոմիտասին. «Ես շար ուրախ եմ, որ հընարաւորութիւն կ'ունենամ Ձեզ հետ ծանօթանալու եւ խօսելու «Անուշ» օպերայի մասին: Եթէ կարելի է Ձեզ հետ բերէք ծայնագրած կտորները, ասում են շար յաջող բան է դուրս եկել»⁶: Տարիներ անց իշխանուհին հետեւեալ գրառումն է կատարել. «Ես չեմ յիշում, թէ երբ եւ որպէզ ծանօթացայ Կոմիտաս վարդապետի հետ, բայց իբրեւ երաժշտագէտի ես շար վաղուց էի ճանաչում նրան եւ բարձր գնահատում: Ես միշտ երազում էի լսել մի հայկական օպերա, որի թէ՛ բովանդակութիւնը եւ թէ՛ երաժշտութիւնը լինէր զուր ժողովրդական: Ես հաւաքացած էի, որ Կոմիտասի գրչի տակից դուրս կը գայ մի հրաշալի բան եւ իմ մէջ միտք յղացաւ՝ առաջարկել նրան Թումանեանի «Անուշ»ը օպերա դարձնել, եւ այդ նպատակով ուղար-

⁴ «Թումանեան Մարիամ (1870-1945).– Մշակութային գործիչ: Ծնուել է Թիֆլիսում: Կինն է իշխան Գէորգ Թումանեանի: Ունեցել է հասարակական, մշակութային գործունեութիւն, մեծապէս նպաստել է Թիֆլիսի հայ թատրոնին, եղել է Հայոց դրամատիկական ընկերութեան նախագահ: Նիւթական օժանդակութիւն է ցոյց տուել հայ գրողներին, յատկապէս Յովհաննէս Թումանեանին, որի մի շարք երկերը լոյս են տեսել նրա ջանքերով: Գրել է արժէքաւոր յիշողութիւններ» (Ստեփանեան, էջ 381):

⁵ Հեղինակի ղեկավարութեամբ կատարուել է 1919ին, *Հայկական Սովետական Հանրապետարան, հոյր. 1*, էջ 463:

⁶ Բախտիար Յովակիմեան, «Կոմիտասի թատերական աշխարհը», *Կոմիտասական, գիրք 2*, կազմ.՝ Մ. Մուրադեան, խմբ.՝ Ռ. Աթայեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 247:

կեցի նրան իմ հրապարակած ժողովածուն»⁷: Այսպիսով, չնայած որ ազգային օպերա ստեղծելու գաղափարը Կոմիտասին յուշել էր իշխանուհի Թումանեանը, սակայն դա Կոմիտասի համար լոկ պատեհ առիթ է եղել. Հայագետ, Մանուկ Աբեղեանը⁸, որը Գեորգեան ճեմարանում երկար ժամանակ աշխատել է Կոմիտասի հետ, այդ մասին գրել է. «Նրա երազներից մէկն էլ այն էր, որ միշտ պատրաստուիմ էր մի օպերա շարադրելու հայկական եւ ընդհանրապէս արեւելեան եղանակների ոգով»⁹: Այդ շրջափուլում ազգային օպերա ունենալու գաղափարն արդէն իսկ թեւածում էր հայոց մշակոյթի երկնակամարում: Մարիամ Թումանեանը 1905ին վկայում է. «Քաւական բան էր գրել Կոմիտասը իր օպերայից եւ մի քանի կտոր նոյնիսկ նուագել է իմ տանը եւ հիացրել ինձ»¹⁰: Փաստօրէն, Կոմիտասն իսկոյն մեծ ոգետրութեամբ ձեռնամուխ էր եղել «Անուշ» օպերայի ստեղծմանը, մանաւանդ որ 1905ի ապրիլին Թիֆլիսում տեղի ունեցան Գեորգեան ճեմարանի երգչախմբի համերգերը Կոմիտասի ղեկավարութեամբ, որոնց ընթացքում էլ կայանում է նրա եւ Յովհաննէս Թումանեանի ծանօթութիւնը:

ԲԵՈՒԼԻՆԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ. ՕՊԵՐԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԸ

Ինչպէս յայտնի է, Կոմիտասը մինչ այդ արդէն իսկ հիմնաւոր կրթութիւն էր ստացել Բեռլինում, որտեղ էլ կայացել էր նրա առաջին ծանօթութիւնը եւրոպական թատերական աշխարհի հետ, եւ ուսանող ժամանակ նոյնիսկ բեմ էր բարձրացել Բեռլինի օպերային թատրոնում՝ որպէս երգչախմբի երգիչ: Հենց օպերայում երգելը եւ նրա դասական սկզբունքներին մօտիկից առնչուելն էլ նպաստել էր հայկական ազգային օպերային ստեղծագործութիւն կերտելու նրա գաղափարին¹¹: Լեզուաբան Հրաչեայ Աճառեանի վկայութեամբ, Կոմիտասի ծայնը մեծ ձայնածաւալ ունէր, եւ Բեռլինում «ուսումն ասարելելուց յետոյ գիրմանացիք առաջարկում են նրան օպերայի երգչի պաշտօն՝ ամսական 1000 մարկ ռոճիկով, սակայն Կոմիտասը մերժում է, յայտնելով, թէ ինքը վարդապետ է»¹²: Յետագայում նոյնպէս՝ Բեռլինում կայացած նրա դասախօսութիւն-համերգի վերջում, ուր նա

⁷ Նոյն, էջ 245 (ըստ Յովակիմեանի՝ *Խորհրդային Վրաստան օրաթերթ, 1939, N79*):

⁸ Ստեփանեան, էջ 9-11:

⁹ Կոմիտասական, գ. 2, էջ 242. Նաեւ՝ *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, կազմ. Գասպար Նշանի Գասպարեան, Հայպետհրատ, Երեւան, 1960, էջ 72-73:

¹⁰ Կոմիտասական, գ. 2, էջ 247:

¹¹ Մանուկ Աբեղեան, «Յիշողութիւններ Կոմիտասի մասին», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 72-73. Նաեւ՝ Բ. Յովակիմեան, «Կոմիտասի թատերական աշխարհը», *Կոմիտասական, գիրք 2*, էջ 242:

¹² Յովակիմեան, էջ 242-43. Նաեւ՝ Հ. Աճառեան, *Կեանքիս յուշերից*, Հայպետհրատ, Երեւան, 1976, էջ 207-8:

ներկայացրել էր հայ ժողովրդական երգարուեստը, տեղի օպերային թատրոնի տնօրենն անձամբ առաջարկել էր Կոմիտասին զբաղեցնել իրենց օպերայի գլխավոր երգչի տեղը՝ բացառիկ աշխատավարձով: Սակայն Կոմիտասը պատասխանել էր. «Իմ երգչի կարողությունները մեկ նըպատակի միայն կը ծառայեն՝ մեծ ժողովրդիս երգն ու երաժշտությունը ծանօթացնել երաժշտական աշխարհին եւ ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերէն ունեցեր է իր ինքնուրոյն երգն ու երաժշտությունը»¹³:

ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Քաջատեղեակ լինելով հանդերձ արեւմտեան օպերային արուեստի դասական օրինաչափություններին, Կոմիտասն ընտրել էր յատկապէս Թումանեանի «Անուշ» պոեմը, քանի որ մտադիր էր ստեղծել հայոց ազգային մտածողութեամբ երաժշտական-բեմական տպավորիչ մի ստեղծագործութիւն, որի հիմքում ընկած լինէր գեղջկական կեանքին եւ նահապետական ընտանիքին յատուկ՝ անմիջական ու կենսական յոյզերով լի պատում, որը հնարաւորութիւն կը տար բացայայտել հայոց ասանդական հոգեբանութեան իւրօրինակ եւ ինքնատիպ նրբերանգները: Օպերայի վրայ աշխատելիս նա ձգտում էր հասնել առաւելագոյն արժանահաւատութեան, որի համար պատրաստ էր նոյնիսկ մեկնել Լոռի եւ ուսումնասիրել, ինչպէս ինքն էր ասում՝ «...*տեղական խօսակցութեան ծայնաստիճանը*», այսինքն՝ Լոռուայ բարբառին բնորոշ հնչերանգները: Կոմիտասի համար խիստ յատկանշական էր այս աստիճան գիտական մօտեցումը, եւ դա բնաւ զարմանալի չէ, քանզի նա գիտակցում էր, որ «Անուշ»-ն իր տեսակով առաջինն էր լինելու հայ իրականութեան մէջ, հետեւաբար այդ գործը նրա համար գրեթէ առաքելութեան էր հաւասարում: Դա պէտք է լինէր իր ժամանակին յարիր «*ժողովրդական օպերա*»՝ հնարաւորինս բնական ծայնելեւէջներով օժտուած մեղեդիական յօրինուածքով, որում երգչական ու գործիքային նուագամասերը կատարելապէս ներդաշնակ պիտի լինէին եւ փոխադարձաբար լրացնէին միմեանց: Կոմիտասագէտ Ռոբերտ Աթայեանը Կոմիտասի «Անուշ» անաւարտ օպերային նուիրուած իր յօդուածում իրաւամբ նշել է. «*Կոմիտասն ինքը, գոնէ նամակներում, իր «Անուշ»ը ոչ մի անգամ օպերա չի անուանել*»¹⁴: Սա նշանակում է, որ վերջինս չափազանց խստապահանջ էր իր ստեղծագործութեան հանդէպ. նրա համար գերակայ խընդիր էր հայ ժողովրդական երաժշտական մտածողութիւնը համադրել օպերային արուեստի դասական ձեւի եւ բովանդակութեան հետ, որի արդիւնքում ստացուելու էր նոր տիպի մի ստեղծագործութիւն, որն իր բը-

¹³ Հրաչեայ Աճառեան, «Յուշեր Կոմիտասի մասին», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 80:

¹⁴ Ռ. Ա. Աթայեան, «Կոմիտասի «Անուշ» անաւարտ օպերայի ուրուագրերը», *Կոմիտասական*, գ. 2, էջ 49, ծնթ. 5:

նոյթով դրանց օրգանական միաձուլումն էր լինելու: Այս առումով յիշարժան է այն, որ 1907ին, երբ Կոմիտասը Վենետիկի Ս. Ղազար կղզում էր գտնուում, Մխիթարեան Միաբանության հայրերի համար ունեցած զեկոյցին առընթեր՝ կատարելով հայոց հարսանեկան երգաշարերն ու յընթացս մանրամասն նկարագրելով ժողովրդական այդ կարետոր ծէսը, իր տըպատորիչ ելոյթի վերջում նա հետեւեալ կերպ է բնութագրել գիտական հարսանիքը. «...մի ամբողջ օպերա է»¹⁵: Այսինքն՝ հայոց ասանդական հարսանիքը Կոմիտասը դիտարկում էր որպէս ծաւալուն մի ներկայացում իր բոլոր դրուագներով՝ երգերի կայուն հերթագայութիւնից մինչեւ յանկարծաբանական բնոյթը, դրանց ազգային արարողակարգը, որ կարող էր տեւել մինչեւ 7 օր՝ հարսին, փեսային եւ միա գործող անձանց նուիրում թազմաբնոյթ երգաշարերի սկիզբը, տրամաբանական զարգացումն ու հանգուցալուծումը, ինչն էլ կուտ ու միասնական էր դարձնում ամբողջ տօնակատարութիւնը: Քանի որ Թումանեանի «Անուշ» պոեմի սիւժէի հիմքում ընկած են հենց գեղջկական ասանդական հարսանիքի արարողութիւնն ու դրա հետ կապուած ժողովրդական հնօրեայ հաւատալիքները, ապա վերոնշեալ արտայայտութիւնը՝ օպերայի հետ զուգահեռ անցկացնելու վերաբերեալ, առաւել բնորոշ է դառնում:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Կոմիտասը մեծ պատասխանատւութեամբ էր վերաբերում հայ իրականութեան համար դարակազմիկ նշանակութիւն ունեցող՝ դասական սեռի խոշոր կտաւի երաժշտական բարդ ու ծաւալուն ստեղծագործութեան մտայղացմանն ու իրագործմանը: Եւ գուցէ հենց դա էր պատճառը, որ նա այդպէս էլ չհասցրեց լիակատար աւարտին հասցնել իր նուիրական իղծը: Նշելի է, որ «Անուշ» օպերայի արիաները, արիոգօները, զուգերգերն ու խմբերգերը Կոմիտասը ջանում էր ստեղծել ժողովրդին հնարաւորինս հոգեհարազատ ելեւէջներով, երբեմն նոյնիսկ ներդնում էր բուն գեղջկական որեւէ երգ՝ փոխելով միայն խօսքը, իսկ նուագակցութեան գործիքային կազմում նա մտադիր էր օգտագործել նաեւ ժողովրդական նուագարաններ, որպէսզի նուագախումբն առաւել հայեցի հնչողութիւն ստանար: Ինչպէս վկայում է Աթայեանը երաժշտագէտ Ալեքսանդր Շահվերդեանի գրքի ծանօթագրութեան մէջ՝ «Կոմիտասը փորձում էր կապարելագործել սրինգը եւ սրեղծել փարբեր ծայնածաւալ ունեցող սրինգների կայուն տեսակներ: Այժմ յայտնի է նաեւ, որ իր «Անուշ» օպերայում Կոմիտասը մտադիր էր սիմֆոնիկ նուագախմբի կազմի մէջ ներմուծել յարկապէս սրինգ»¹⁶:

¹⁵ Հ. Կ. Ս. Սահակեան, «Հայկական երաժշտութիւն», *Բազմավէպ*, 7-8:1907, էջ 369-73:

¹⁶ Ալեքսանդր Շահվերդեան, *Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկներ. XIX-XX դդ., խմբ. եւ ծանօթ.*՝ Ռ. Աթայեան, Հայպետհրատ, Երեւան, 1959, էջ 385, 610 ծնթ. 10:

Բարեբախտաբար պահպանուել է Կոմիտասի սրինգների հաւաքածուն՝ կազմուած տարբեր չափի փայտեայ եւ մետաղեայ նուագարաններից, որոնք ցուցադրուած են իր անունը կրող թանգարան-ինստիտուտում: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ չնայած Կոմիտասը ծգտում էր լիարժէք վաւերականութեան, այդուհանդերձ՝ 1908 Յուլիսի 2ին գրած նամակում նա Մարիամ Թումանեանի միջոցով խնդրում է Յ. Թումանեանին, որ պոետնում երբեմն հանդիպող թուրքերէն բառերից որքան կարելի է խոյս տայ՝ երգի հայկական ոգին պահելու համար: Չնայած նրան, որ Կոմիտասն իր մանկութիւնը Քէօթահիայում (կամ Կուտինայում)՝ թրքախօս միջավայրում էր անցկացրել, եւ թւում է, թէ նրա համար պիտի որ սովորական լինէր մեր բարբառներ սպորդած որոշ ոչ-հայերէն բառերի առկայութիւնը, սակայն թերեւս հենց այդ հանգամանքն էլ մղում էր նրան հնարաւորինս զտարին եւ անխառն պահել հայոց լեզուն (*Քէօթահիայում, ինչպէս եւ արեւմտեան Հայաստանի այլ բնակավայրերում, հայերը պարտադրուած էին իրենց մայրենի լեզուով չխօսել, քանի որ դա չափազանց վրդաւանգատու էր կեանքի համար*)¹⁷: Վերը նշուած դիտողութեանը կցելով եւս միքանի նկատառում, Կոմիտասը նոյն նամակի վերջում յաւելում է. «Գըրուածքը շուր պարտաստէ, որ ես էլ ուսումնասիրել կարողանամ ու երաժշտութեան ծրագիր մշակեմ: Չեմ կարող որոշ ասել, թէ երբ պարտաստ կը լինի, որովհետեւ ես մենակ եմ եւ բոլոր գործերը ինձ վրայ են ծանրացած»¹⁸: Սոյն տողերը պերճախօս կերպով վկայում են Կոմիտասի գերծանրաբեռնուած լինելու մասին: Կարելոր է նաեւ նշել, որ մինչեւ 1907 նա նոյնիսկ դաշնամուր չուներ. Էջմիածնի միաբանութեան հանդիսասրահում առկայ էր լոկ չորս ութնեակ ծայնածաւալով մի փոքրիկ, հնամենի ֆիսհարմոն (Harmonium), որի ծայնը զուրկ էր նրբերանգներից¹⁹ եւ բաւարար չէր ազատօրէն ստեղծագործելու համար, եւ Կոմիտասը կարող էր հնչեցնել այն միայն օրուայ սահմանափակ ժամերին: Չնայած դրան, Կոմիտասն արդէն 1905ին Էջմիածնում, մտերմական շրջանում, կատարել է

¹⁷ Այս ցաւալի երեսոյթի մասին տե՛ս նաեւ՝ Արփի Վարդումեան, «Քէօթահիայի հայերի երաժշտական մշակոյթը (ըստ Կոմիտասի գրառած հայատառ թուրքերէն տեքստերով երգերի անտիպ ժողովածուի)», *Հայ ժողովրդական մշակոյթ XVI, աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում, Դերենիկ Վարդումեանի ծննդեան 90ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2014, Երեւան, 2014, էջ 153-60. նաեւ՝ Arpi Vardumyan, “The Musical Culture of Kutahia’s Armenian Community (as reflected in a unique collection of songs recorded by Komitas Vardapet),” *The Armenian Communities of Asia Minor*, “Armenian History and Culture Series, Historic Armenian Cities and Provinces”, Volume 13”, UCLA, 2014, Los Angeles, էջ 195-208:

¹⁸ Կոմիտասական, գ. 2, էջ 246:

¹⁹ Պատահական չէ, որ *դաշնամուրը* եւրոպական լեզուներով կոչում է *Fortepiano* – որ լատիներէն *Forte* – *ուճգին*, եւ *Piano* – *մեղմ* բառերի միակցումն է, որոնցով արտայայտում են երաժշտական հիմնական նրբերանգները:

որոշ հատուածներ («Ասում են ուրիշ», «Աղջի անաստուած» եւ «Բարձր սարեր»), իսկ ունկնդիրների շարքում եղել է նաեւ Յովհաննէս Թումանեանը²⁰:

ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ

Կոմիտասի «Անուշ» օպերայից մնացել են 20ից ավելի մեներգեր, զուգերգեր, խմբերգեր եւ նուագախմբային մշակումներ, որոնք պահուած են իր արխիւում՝ Երեւանի Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանում (ԳԱԹ): *Կոմիտասական ժողովածուի՝ 1981ին լոյս տեսած 2րդ գրքում Աթայեանը ներկայացրել է այն ամէնը, ինչ հնարաւոր է եղել գտնել իր ժամանակ²¹: Ըստ այդմ՝ երգերի մի մասն արդէն եւրոպական նոտագրութեամբ էր գրառուած՝ գեղեցիկ, կոկիկ ձեռագրով, առանձին թերթիկների վրայ: Մաքրագիր այդ օրինակները 1905ի Ապրիլին Կոմիտասն իր հետ տարել էր Թիֆլիս՝ ցուցադրելու Մարիամ Թումանեանին: Իսկ միւս՝ դեռեւս սեւագիր մասը նոր հայկական (*Լիմոնճեանի կամ Արդի հայկական*) ծայնանիշերով է պահպանուել՝ «Անուշ» պոեմի 1903ի հրատարակութեան տողերի արանքում, որոնք յետագայում Աթայեանն ինքն է փոխադրել եւրոպական նոտագրութեան: Դրանց թում են՝ «Եկէք, քոյրեր» (փերիների երգը), «Վուշ-վուշ, Անուշ, վուշ-վուշ, քորիկ» (երգչախմբի երկու ծայնի համար), «Աղջի անաստուած, նստիր վըրանում» (Սարոյի երգը), «Ամպի տակից ջուր է գալի», Անուշի «Ասում են ուրիշ աղջիկ էր ինձ պէս» արիան, Սարոյի «Ա՛խ, Անու՛շ, Անու՛շ» ասերգը, Անուշի «Ա՛խ, չէ, ես գիտեմ, որ ես բախտ չունիմ» երգը, «Բարձր սարեր, ա՛յ սարեր», «Սիրուն աղջիկ, ի՛նչ ես լալիս», «Շնորհակալ եմ, անցուոր ախպէր», «Ետ դառ, ե՛տ, իգիթ», «Ա՛խ, էն կանաչ սարի լանջին», «Վ՛եր կաց, իգիթ», «Տեսէ՛ք, տեսէ՛ք, դափ ու զուռնով», «Բերում են, հըրե՛ն» երգերը²²: Աթայեանը յայտնում է նաեւ, որ 1952ին Կոմիտասի երեւանեան արխիւը նշանակալիօրէն համալրուել է մի շարք արժէքաւոր ձեռագրերով, որոնց հիման վրայ հնարաւոր է դարձել առաւել հանգամանալից անդրադառնալ նրա անտիպ ստեղծագործութիւններին²³:*

Հարկ է նշել նաեւ, որ 1956ին ռուսերէն լեզուով լոյս է տեսել օպերային արուեստի անուանի գիտակ Գէորգի Տիգրանովի *Հայ երաժշտական թատրոնը* երկհատորեակի Ա. հատորը²⁴, որտեղ հեղինակը ռուս

²⁰ Կոմիտասական, գ. 2, էջ 246:

²¹ Նոյն, էջ 42-82:

²² Նոյն:

²³ Ռ. Աթայեան, «Կոմիտասի ձեռագրերը», *Սովետական արուեստ*, 4:1955, էջ 42:

²⁴ Г. Г. Тигранов, *Армянский музыкальный театр, очерки и материалы, том 1, (IV. Оперные замыслы Комитаса)* [Գ. Գ. Տիգրանով, *Հայկական երաժշտական թատրոնը. ակնարկներ եւ նիւթեր, հոր 1, (IV. Կոմիտասի օպերային մտայղացումները)*, Հայպետհրատ, Երեւան, 1956, էջ 191-217]:

ընթերցողին է ներկայացրել հայկական առաջին դասական օպերային ստեղծագործությունների մի շարք, այդ թում նաև Կոմիտասի անաւարտ «Անուշ»ը: Հեղինակը, նամակագրական փաստերի հիման վրայ, ռուսալեզու ընթերցողի ուշադրութեանն է յանձնել Կոմիտասի եռանդուն գործունէութիւնը Թումանեանի «Անուշ» պոեմին ծանօթանալու պահից ի վեր՝ իր յօդուածում տեղադրելով «Ասում են ուրիշ աղջիկ էր ինձ պէս», «Համբարձում եայլա» եւ «Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս» երգերի նոտային օրինակները: Տիգրանովը հաւաստում է, որ պահպանուած նիւթերը յստակ պատկերացում են տալիս ո՛չ միայն Կոմիտասի յօրինած գլխաւոր լէյտմոտիւնների (մեղեդի կամ մեղեդիական դարձուածք, որ ծառայում է օպերայում որեւէ անձ, երեւոյթ, ապրում կամ գաղափար բնութագրելու համար)²⁵ մասին, այլեւ ուրուագծում են դրանց զարգացման հիմնարար սկզբունքները: Հեղինակը նշում է նաեւ նուագախմբի դերի կարեւորումը եւ Կոմիտասի մտադրութիւնը՝ օպերայում հայկական ժողովրդական գործիքներ ներմուծելու անհրաժեշտութեան մասին:

Այս ամէնով հանդերձ, Կոմիտասին այդպէս էլ վիճակուած չէր աւարտուն ու լիարժէք աստիճանի հասցնել իր փայլալայն «Անուշ»ը, քանի որ նա մշտապէս բազմազբաղ է եղել: Նոյնքան բազմազբաղ է եղել նաեւ Թումանեանը, եւ նրանց հանդիպումն ու գործակցութիւնն այդպէս էլ չի կայացել՝ մասամբ նաեւ վերջինիս վեցամսեայ ձերբակալութեան պատճառով, ինչը մեծ վիշտ է պատճառել Կոմիտասին: Ահա թէ ինչ է գրել նա իշխանուհի Մարիամին այդ ցաւալի իրողութեան մասին. «Մեր Յովհաննէսի ձերբակալուելը շատ վատ տպաւորութիւն թողեց վրաս, որքան է զորկւում մեր գրական բանաստեղծական կեանքը նրա՝ անգործ բանտում մընալով: Իհարկէ, երեսի դեռ երկար կը պահեն մինչեւ ամբողջ կծիկը բաց անեն... «Անուշ» առաջ է գնում, էլի մի շարք նոր բաներ գրեցի: Մնացել եմ մոլորուած, Յովհաննէսի բանտարկութիւնն էր պակաս, էլի կիսաւոր մընաց «Անուշի» երգական խմբագրութիւնը: Յոյս ունէի, որ կը գար այս տօներին եւ վերջ կը տայինք, այդ էլ այդպէս մնաց...» (1909, Փետրուար 14)²⁶: Աթայեանը մէջբերել է նաեւ գրող Դերենիկ Դեմիրճեանի վկայութիւնը. «Յիշում եմ նրա հապուածները «Անուշ» օպերայից, որի վրայ աշխատում էր. երգեց Սարոյի եւ Անուշի հանդիպումը, «Ասում են ուրիշ»: Արիաները օրգանական ծնունդ էին ժողովրդական երգի եւ զարմանալի պարզ իրենց գեղեցկութեան մէջ: ... Մոտիւները յիշում եմ» (1906ի մասին է)²⁷: Յայտնի է, որ Դեմիրճեանը նաեւ հմուտ ջութակահար էր, այնպէս որ նրա խօսքը

²⁵ Կ. Սեմենսկի, *Երաժշտական տերմինների համառօտ բառարան*, Հայպետհրատ, Երեւան, 1955, էջ 47:

²⁶ Կոմիտասական, գ. 2, էջ 42. նաեւ՝ էջ 247-48:

²⁷ Նոյն, էջ 42-43:

մասնագիտական կշիռ ունէր²⁸: Յաւելենք, որ վերոնշեալ *Ժամանակակիցները Կոմիտասի մասին* գրքի ներածականը՝ «Երկու խօսք» վերտառութեամբ, նոյնպէս հեղինակել է Դեմիրճեանը²⁹:

Ինչպէս գիտենք, Կոմիտասի եռանդուն գործունէութիւնը ցաւալիօրէն կարճ է տեսել՝ հազիւ 20 տարի: Իր ողջ ստեղծագործական կեանքում նա կարծես կանխագգալիս լինէր, որ ի վերուստ իրեն տրուած ժամանակը բաւարար չի լինելու բազում մտայղացումներն իրագործելու համար, այնպէս որ ստիպուած էր միաժամանակ միքանի բարդագոյն գործ ձեռնարկել: Կոմիտասն աշխատում էր օր ու գիշեր՝ երբեւէ չխնայելով իրեն, յաճախ նաեւ իր առողջութեան հաշուին: Սակայն... 1915ի գարնանն ընդհատուած նրա ստեղծագործական բոլոր կեանքը հազիւ թէ բաւարար լինէր իր համապարփակ ծրագրերը լիովին իրականացնելու համար:

ՍՓԻԻՌՔԻ ԵՐԱԺՇՏԱԳԷՏՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՇ»ԻՆ

Կոմիտասի ծննդեան հարիւրամեակի առթիւ բանաստեղծ ու երգիչ Յակոբ Ասատուրեանը, ով բազմիցս տարբեր բեմերում կատարել է Կոմիտասի երգերը եւ հեղինակել *Կոմիտաս վարդապետ եւ հայ երգը* գիրքը³⁰, 1969ին՝ Կոմիտասի ծննդեան 100ամեակի առթիւ, լոյս է ընծայել նաեւ *Կոմիտաս վարդապետ. (Gomidas Vartabed)* յօդուածների ժողովածուն՝ հայերէն եւ նոյնի անգլերէն թարգմանութիւնը: Անդ առկայ է նաեւ արուեստագէտ Շահան Ռ. Պէրպէրեանի յօդուածը, որտեղ վերջինս իր ուշագրաւ մտորումներն է շարադրել Կոմիտասի անձի եւ գործի շուրջ. «Իր մրերիւնները ամէնքն ալ գիտեն, որ այդ արեն արդէն ձեռնարկած էր պատրաստութիւնը մեծ գործի մը որ իր ծրագրին մէջ իր բուն անձնական բերումը պիտի ըլլար երաժշտութեան: Յովհաննէս Թումանեանի «Անուշ»ին վրայ օրեռայի մը պատրաստութեան՝ որուն համար կը խորհէր յօրինել նոր, հայկական նուագախումբ մը, երոպական գործիքներու մէջէն ընտրելով եւ անոնց միացնելով հայկական ու արեւելեան գործիքներ, սրինգներ

²⁸ Թումանեանը *Ժամանակակիցների յուշերում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 911. (Դերենիկ Դեմիրճեանի յուշագրութեան N20 ծանօթագրութեան տեղեկացմամբ՝ «1903 թ. ջութակի դասեր վերցնելու նպատակով նա (Դեմիրճեանը – Ա.Վ.) մեկնում է Մոսկուա, սակայն վատառողջութեան պատճառով շուտով ընդհատում է պարապմունքները»)՝ Հր. Մուրադեան, *Դերենիկ Դեմիրճեան*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1963, էջ 201:

²⁹ Դերենիկ Դեմիրճեան, «Երկու խօսք», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 3-7:

³⁰ Յ. Ասատուրեան, *Կոմիտաս Վարդապետ, անձը եւ գործը. (իր ծննդեան հարիւրամեակին առթիւ)*, Gomidas Vardabed, His life & Work, (*On the centennial of his birth*), Published by the Diocese of the Armenian Church of Archbishop Torkom Manoogian, Primate, New York, October 1969:

մասնատրաբար: Ի՞նչ պիտի ըլլար այդ գործը. պատճառներ ունիմ կարծելու թէ մեծարժէք պիտի ըլլար: Ինծի երգած ու նուագած է անոր Նախերգանքը եւ խոր փայտորութիւն եմ կրած»³¹: Այս վկայութիւնը շատ կարեւոր է, քանզի սոյն յօդուածը՝ գրուած Կոմիտասի մահուան առաջին տարեւիցի առթիւ, մինչ այդ տպագրուել էր նաեւ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուի մէջ³², որի վերոնշեալ մէջբերումը նկատի ունենալով՝ Աթայեանը նշել է, որ չնայած «Անուշ»ի նախերգանքի նօտաները չկան հեղինակի արխիւային նիւթերում, ինքը յոյս ունի, որ «*հետագայ փնտրումները նոր նիւթեր եւս կ'այայտնաբերեն*»³³: Իսկ Կոմիտասի մտերիմ Արշակ Զօպանեանն իր «Անահիտ» պարբերականում գրել է. «Կոմիտաս «Անուշ»ի քանի մը մեներգերուն եւ խմբերգերուն եղանակը յօրինած էր (ինքնահնար եղանակներ՝ ժողովրդական երգերու ոճով). ապոնք ինծի երգեց էջմիածին, եւ շար սիրուն գրայ...»³⁴:

ՊԱՏՇԱՃ ԼԻՐԻԵՏՈՅԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Կոմիտասի ստեղծագործութեանը լրջորէն խոչընդոտող հանգամանքներից էր նաեւ «Անուշ» պոեմի հիման վրայ գրուած պատշաճ լիբրետոյի բացակայութիւնը: Տեղեկութիւններ կան, որ Կոմիտասը քանիցս խնդրել է Թումանեանին՝ սցենար շարադրել «Անուշ» օպերայի համար, սակայն, ըստ երեւոյթին, ամենայն հայոց բանաստեղծի համար հոգեբանօրէն բարդ է եղել իր պոեմից որոշ հատուածներ կրճատել կամ յաւելել: «Կոմիտասը եւ հայ երաժշտութիւնը» յօդուածում Արշակ Զօպանեանն այդ մասին հետեւեալն է գրել. «*Թիֆլիս գտնուած միջոցիս (1908 – Ռ. Ա.) Կոմիտասի հետ Թումանեանի տունն էինք օր մը: Կոմիտաս նորէն խնդրեց, որ փութացնէ լիպրետէթոյին խմբագրումը, Թումանեան զգացուց, որ ափիկայ իր ընելիք բանը չէր. «Ես պոեմը գրեր եմ, ըսաւ խնդալով, լիպրետթօն էլ թող ուրիշը հանէ*»³⁵: Հեղինակը՝ Աթայեանը սրան յաւելում է. «*Հաւանաբար Թումանեանի համար շար դժուար պէտք է լինէր իր «միս ու արիւն» դարձած, բարձր կարարելութեան հասցուած «Անուշ»ից լիբրետո պատրաստելու համար նրանում ինչ-որ բաներ փոխել կամ աւելացնել: Երբ նա*

³¹ Շահան Ռ. Պէրպէրեան, «Կոմիտաս Վարդապետ, անձը եւ գործը. յօրինողը», Միոն, Յունուար, 1936. նաեւ նոյնը՝ «Կոմիտաս վարդապետ, անձը եւ գործը», էջ 26-27. նաեւ՝ Յակոբ Յ. Ասատուրեան, Կոմիտաս վարդապետի հետ, Բ. հրատ., Նարեկացի Արուեստի Միութիւն, Sipan printing co., Պէյրութ, 1969, էջ 117:

³² Շահան Ռեթոս Պէրպէրեան, «Կոմիտաս», Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 81-99:

³³ Ռ. Աթայեան, «Կոմիտասի երաժշտական ժառանգութիւնը», Կոմիտասական, գիրք 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 7-83:

³⁴ Ա. Զօպանեան, «Կոմիտասը եւ հայ երաժշտութիւնը», Անահիտ, 1-2:1931. նաեւ՝ Ասատուրեան, Կոմիտաս վարդապետի հետ, էջ 117:

³⁵ Աթայեան, Կոմիտասի «Անուշ» անաւարդ..., էջ 53-54, ծնթ. 11:

թոյլ էր փութել որ ուրիշն այդ անի, դա էլ մեծ բան էր»³⁶: 1908 Մայիսի 24ին Աբ. Էջմիածնից գրած նամակով Կոմիտասը Թումանեանին յայտնում է. «Աղբեր, վաղուց է սկսել եմ եւ բաւական բան գրել եմ քու «Անուշ»ից, բայց դեռ պակասատր բաներ շար կան, որպէսզի մի ամբողջութիւն դառնայ: Այս գիրս առնելուն պէս գրիչդ կ'առնես եւ ինձ մի դրական բան կը գրես: Այս ամառուան արձակուրդին պէտք է զբաղուեմ առաւելապէս «Անուշով»: Գրի՛ր, թէ ե՞րբ կարող ես միքանի օրով ինձ մօտ հիւր գալ եւ այսպեղ միասին վերջացնենք եւ ես հանգիստ շարունակեմ. ամէն անգամ երբ փրամադրութիւնս փեղն է, ձեռքերս թուլանում են, որովհետեւ երգի յարմարեցրած չեն. դեռ բաներ ու պակասներ էլ կան»³⁷: Ըստ ամենայնի, Կոմիտասն ինքն է փորձել բեմագիր գրել, որը սակայն նոյնպէս անաւարտ է մնացել. առկայ է միայն օպերայի նախաբանի եւ առաջին պատկերի մանրամասն բեմագիրը: Յատկանշական է, որ մեծ երգահանը հնարաւորինս հարազատ է մնացել մեծ բանաստեղծի պոեմին, եւ միայն երբեմն է աննշան փոփոխութիւններ մտցրել բանաստեղծութեան մէջ, որպէսզի համահունչ դարձնի այն երգի տաղաչափութեանը: Կոմիտասը ձգտել է Թումանեանի բնագիրը հնարաւորինս լրիւ օգտագործել օպերայի մէջ. նրա համար թանկ է եղել «Անուշ»ի ամէն մի տողը: Ըստ Աթայեանի, գրականագէտ եւ թարգմանիչ Լիլի Տէր Մինասեանն իր յօդուածում (Գրական թերթ, 16 Յունիսի 1978) Կոմիտասին պատկանող՝ 1903ի հրատարակութեան մի օրինակի հիման վրայ փորձել է հաստատել, որ Թումանեանը անմասն չի մնացել Կոմիտասի համար լիբրետո ստեղծելու գործում, քանզի վերջինս պոեմի իր օրինակում գրութեան փոփոխութիւնների առաջարկները ուղարկել է բանաստեղծին, սակայն ըստ երեւոյթին այն ետ չի ստացել³⁸: Յետագայում Տէր Մինասեանն իր յօդուածների ժողովածուն լոյս է ընծայել Թումանեանի ստեղծագործութիւնների երաժշտական մարմնաւորումները վերտառութեամբ գրքով³⁹, որտեղ, ըստ ԳԱԹում պահպանուած արխիւային նիւթերի, մասնաւորապէս՝ Կոմիտասին պատկանող «Անուշ» պոեմի երեք օրինակներից մէկի վրայ սեւ մատիտով կատարուած բազմաթիւ նշումների՝ (Կոմիտասի ֆոնդ, N 485) համեմատելով դրանք Թումանեանի օրինակի վրայ վերջինիս կատարած այլ նշումների հետ, գրականագէտը յանգել է հետեւեալ եզրակացութեանը. «Ըստ երեւոյթին, Կոմիտասը Թումանեանին է տրամադրել «Անուշի» իրեն պատկանող օրինակներից

³⁶ Նոյն:

³⁷ Կոմիտաս Վարդապետ, Նամականի, աշխ.՝ Գուրգէն Գասպարեան, Սարգիս Խաչենց. Փրինթինֆօ, Երեւան, 2009, էջ 138-39:

³⁸ Աթայեան, «Կոմիտասի «Անուշ» անաւարտ օպերայի ուրուագրերը», Կոմիտասական, գիրք 2, 53-54, ծնթ. 11:

³⁹ Լ. Տէր-Մինասեան, Թումանեանի ստեղծագործութիւնների երաժշտական մարմնաւորումները, Յովհ. Թումանեանի թանգարան, Արեւելք-Արեւմուտք մատենաշար, «Հայկարի» ՍՊԿ տպարան, Երեւան, 2019, էջ 73-81:

մէկը՝ նախապէս նրա վրայ նշելով իր նկատառումները: Թումանեանն իր սիրալիրութեամբ սկզբում, երեւի, յանձն է առել լիբրետոյի ստեղծումը, բայց այդ մտքով շար չի ոգեւորուել: Հնարաւոր է նաեւ, որ նրանք մի օր միասին էլ նստած լինեն եւ խորհած այդ հարցի շուրջ: Յայտնի է, որ Թիֆլիսում, բանաստեղծի տանը, Կոմիտասը միքանի կտոր երգել է իր «Անուշ»ից: Սակայն Թումանեանը Կոմիտասի առաջարկած տեքստային խըմբագրութիւնները, գոնէ այդ օրինակում, չի արել⁴⁰ - արձանագրում է գրքի հեղինակը եւ յաւելում,- Թումանեանի օրինակում կան նաեւ սեւ թանաքով նշումներ, որոնք յատկապէս Թումանեանի ձեռքով են կատարուած: Սեւ մատիկով ընդգծուած թուրքերէն բառերի կողքին Թումանեանը սեւ թանաքով համարներ է դրել եւ փողպատակին գրել դրանց նշանակութիւնները: Այսինքն փոխել է այդ բառերի բացատրութիւնները եւ ոչ թէ փոխարինել հայերէնով, ինչպէս խնդրել էր Կոմիտասը: Այդ բառերն ամբողջ պոեմում ընդամենը քսանն են: Պարզ է, որ Կոմիտասը թուրքերէն շար աւելի լաւ գիտէր, քան Թումանեանը, բայց նա, ըստ երեւոյթին, իր իրաւունքը չէր համարում նրա գրութեան մէջ այդպիսի փոփոխութիւններ մտցնելը, թէեւ գտնում էր, որ դա անհրաժեշտ է «երգի ոգին պահելու համար»⁴¹: Սա լաւագոյնս վկայում է հայոց երկու մեծերի փոխադարձ յարգանքի մասին: Տէր Մինասեանի գիրքը բացում է Թումանեանի լուսանկարով՝ իր իսկ ձեռագրով արուած հետեւեալ մակագրութեամբ. «Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին եւ իր ոգեւորութիւնով կենդանութեան շունչ է տալիս նրան, որ նա ապրի մշտապէս, բայց որ նա թոչի, դրա համար նրան թելեր են հարկաւոր, իսկ թելեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհում, որ կոչւում է երաժշտութիւն...»⁴²: Ահա թէ ինչպէս է բնորոշել Թումանեանը բանաստեղծութեան եւ երաժշտութեան բուն էութիւնը. ըստ երեւոյթին նա խորապէս զգում էր երաժշտական արուեստի մոգական ուժը եւ անչափ երաժշտասէր անձ էր, ով երբեմն նոյնիսկ երգեր էր յօրինում եւ ինքն էլ կատարում էր դրանք: Նրա հեղինակած երգերից յայտնի է, օրինակ՝ «Ախ ի՞նչ լաւ են սարի վրայ» երգը, որը լայնօրէն տարածուած է ժողովրդի մէջ:

Անդրադառնալով Կոմիտասի «Անուշ» օպերայի պահպանուած հատուածներին, հարկ է նշել նաեւ, որ դրանց երաժշտական մտածողութիւնը միատարր չէ, այլ հարուստ է տարբեր բնոյթի մեղեդիների համադրութեամբ: Կոմիտասի ձեռագրերում առկայ են ինչպէս գեղջկական երգային ելեւէջներ, այնպէս էլ ժողովրդական որոշ եղանակներ, որոնք երբեմն օգտագործուած են գրեթէ առանց փոփոխութեան՝ փոխարինելով ասանդական խօսքը պոեմի բառերով, նաեւ գուսանական կամ քաղաքային երգե-

⁴⁰ Նոյն, էջ 77-78:

⁴¹ Նոյն, էջ 78:

⁴² Նոյն, էջ 3:

րին յատուկ մեղեդիներ, որոնք նոյնպէս հմտօրէն յարմարեցուած են պոեմի բովանդակութեանը: Սակայն անգամ եթէ խօսքը Կոմիտասի յայտնաբերած գեղջկական եղանակների մասին է, ապա դրանք հենց գրի առնելիս էլ ենթարկում էին գեղագէտ-բանահաւաքի բարձրաճաշակ մաքրագործմանը: Իսկ «Անուշ»ի դէպքում այնտեղ ներառուած ժողովրդական մեղեդիները Կոմիտասը նրբօրէն խմբագրում էր Թումանեանի պոեմի բանաստեղծական ատաղձին համահունչ՝ ստեղծագործելով ժողովրդական ոգով ու շնչով, ձգտելով հասնել խօսքի եւ մեղեդու կատարեալ միաձուլման: Ինչպէս հրաշալիօրէն բացայայտել է ֆրանսահայ գրող Շահան Շահնուրը, «...*հում բնագիրէն քիչ բան փոխեց Կոմիտաս, պիտի ըսէինք, եթէ չգիտնայինք թէ քիչ բան գոյութիւն չունի բանաստեղծութեան մէջ: Միակ բառի մը, նոյնիսկ վանկի մը փոփոխութիւնը բաւ է որպէսզի բանաստեղծութիւնը նուազի կամ թեւածէ: Այս իմաստուն միջամտութիւնը գրաւականն էր այն սուր զգայնութեան, որով Վարդապետը կը թափանցէր բանաստեղծութեան ոգիին*»⁴³: Նոյնը անշուշտ վերաբերում է Կոմիտասի գլորառած երգերի երաժշտական բաղադրիչին, որի հայեցողութիւնը նոյնպէս երբեմն կախում ունէր միքանի հնչիւնից կամ ելեւէջից:

Ընդհանուր առմամբ Կոմիտասի «Անուշ»ը երգեցողական տիպի օպերա է, որի պահպանուած երգչական հատուածները երբեմն քառեակային, իսկ անելի յաճախ՝ երկու կամ երեք մասանի երգեր են, որոնք ընդգրկում են օպերայի բովանդակութեան գլխաւոր հանգուցային կէտերը, պոեմի բոլոր կարեւորագոյն մեներգային եւ զուգերգային դրուագները⁴⁴: Ինչ վերաբերում է ամբողջ կառոյցի երաժշտական տրամաբանութեանը, ապա դրանում նկատելի է լէյտմոտիւային մտածողութիւնը, որի միջոցով Կոմիտասը ձգտում էր հասնել որոշակի ելեւէջային կամ մեղեդիական յիշեցումների⁴⁵ եւ բովանդակութեան ընդհանուր տրամաբանական միասնութեան:

Փոքր-ինչ շեղուելով սոյն հիմնական նիւթից, արժէ մէջբերել Կոմիտասի *հմայքին տակ* գրքում զետեղուած՝ Լիպարիտ Նազարեանցի յուզիչ գլորառումը՝ Կոմիտասի հետ ունեցած մի յիշարժան զրոյցի մասին, որի ընթացքում վերջինս դաշնամուրով նուագել էր իր յօրինած մի իւրօրինակ ստեղծագործութիւնը: Ահա թէ ինչ տպաւորութիւն էր ստացել յուշագրողը. «*Տարօրինակ – եթէ ոչ արտասովոր – բան մը կար այդ երաժշտութեան մէջ. հայկական չէր ան՝ ընդունուած ըմբռնումով, ոչ ալ եւրոպական. Ժութկալ, անսթեւեթ, երբեմն մինչեւ իսկ չափազանց անպաճոյճ, բայց խորապէս յուզող, առինքնող: Հազիւ նշմարելի թախիծ մը կ'անցնէր կրորին մէ-*

⁴³ Շահան Շահնուր, *Ազարն Կոմիտաս եւ իբր յաւելագիր վաղը*, մատենաշար «Յառաջ», Փարիզ, 1970, էջ 10:

⁴⁴ Ալիքսանդր Շահվերդեան, *Հայ երաժշտութեան պատմութեան ակնարկներ*, էջ 437, ծնթ. 14, էջ 614-15:

⁴⁵ *Музыкальная энциклопедия, т. 4* [Երաժշտական հանրագիտարան, հտր. 4], «Սովետական հանրագիտարան» հրատ., Մոսկուա, 1978, էջ 597:

ջէն. թախիժ՝ որ չի ցաւցըներ, վասնզի անոր քով շարունակ լսելի են յամառ վճռականութեան հնչիւնները, որոնք կը խաղաղեցնեն հոգին եւ յուսոյ ու լաւարեւոյթեան երանութիւնը կ'ապրեցնեն»⁴⁶։ Առաւել ուշագրաւ է շարունակութիւնն այս անջնջելի տպաւորութեան, որ ստացել է ունկնդիրը Կոմիտասի նուագից. «Վերյիշում, յուշանք – այդ գաղափարի գերմաներէն բառովը կոչած էր Կոմիտաս իր կտորը: – *Reminiszenz* ... – Ինչու՞ այդպէս, – հարցոցի զարմացած: – Ժպտեցաւ ու ըսաւ միայն, թէ հայերէն ոչ մէկ բառ կ'արտայայտէ այդ գաղափարը այնպէս, ինչպէս որ ինքը կ'ըմբռնէ զայն: – Այսօր, ամբողջ քառորդ դար ետքը միայն կարելի եղած է հասկնալ ոչ միայն *Reminiszenz*ի՝ այլեւ Կոմիտասի անհուն էութիւնը»⁴⁷։

Սրանից կարելի է եզրակացնել, որ Կոմիտասի համար առանձնա-յատուկ նշանակութիւն է ունեցել երաժշտական *յիշեցումի* կամ *վերյուշի* գաղափարը. նա կիրառել է այդ խորհրդաւոր հնարքը նաեւ «Անուշ» օպերայում՝ գործող անձանցից իւրաքանչիւրին օժտելով որոշակի ոճական ուղղութեամբ ունեցող մեղեդիներով, Կոմիտասը դրանց միջոցով տարբեր կերպարներ է կերտում, որոնց փոխարաբերութիւնների զարգացումն ապահովում է ստեղծագործութեան գրաւիչ ընթացքն ու խորը յուզակա-նութիւնը։ Դրան նպաստում են նաեւ նուագախումբն ու երգչախումբը, որոնց դերը նշանակալից է օպերայում թէ՛ որպէս նուագակցութիւն, եւ թէ՛ որպէս կերպարային բնութագրումների երաժշտական արտայայտութիւն։

ԱՆԱԻԱՐՏ «ԱՆՈՒՇ» ՕՊԵՐԱՅԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին գրքում առկայ է Աղանի Մես-րոպեանի յուշերի մի ընդարձակ շարք, որտեղ խօսւում է նաեւ Կոմիտասի «Անուշ» օպերայի մի շարք հատուածների կատարման մասին՝ Կոստանդ-նուպոլիսի «Պըտի-Շան»ի ձմեռային թատրոնի բեմում. «Մեծ երաժշտա-գէտ-երգչին հասած հոգեկան դժբախտութենէն վերջ, անոր աշակերտնե-րէն խումբ մը միանալով Պոլսոյ հայ դրամատիկ թատերական խումբին ե-րկրասարդ դերասաններուն (որոնցմէ շատերը նոյնպէս Կոմիտասի «Գու-

⁴⁶ Եղուարդ Յակոբեան, *Կոմիտասի հմայքին փակ. երաժշտական ուսումնասիրու-թիւններու եւ քննախօսութիւններու ժողովածու*, Կրատ. Շիրակ, Պէյրութ, 1972, էջ 41։

⁴⁷ Նոյն. նաեւ՝ էջ 49-50։ Եգիպտահայ երաժշտագէտ Եղուարդ Յակոբեանն իր վե-րոնշեալ գրքում արձարծել է Լիպարիտ Նազարեանցի անձի մասին ուշագրաւ տուեալներ. «Լիպարիտ Նազարեանցի անունը սերտօրէն կապուած է Կոմիտա-սի «*իքնակենսագրութիւնի*»ի հրապարակման պատմութեան հետ» (էջ 31)։ Յակոբեանն ամբողջութեամբ մէջբերում է նաեւ Կ. Պոլսի «Ինիոն-Ֆրանսէզ»ի սրահում 1911ին կայացած Կոմիտասի հրապարակային համերգի մասին վեր-ջինիս յօդուածը՝ «Կոմիտաս Վարդապետի համերգին շուրջ» խորագրով՝ որպէս Կոմիտասի գործի գնահատման առաջին լուրջ փորձ՝ Ռութէն Լեոնեան գրչանու-նով (էջ 32-36)։

սան» երգչախումբին անդամներն էին), 1919 թուի գարնանը «Պրտի-Շան»ի ձմեռային թատրոնին մէջ, դերասան Աշոտ Մադաթեանի գլխավորութեամբ առաջին անգամ ըլլալով ներկայացուցին Կոմիտասի ծայնագրած «Անուշ» օպերայէն որոշ հատուածներ՝ իր նախնական վիճակով: «Պրտի-Շան»ի ծովածալալ հայ հասարակութիւնը օւացիաներով դիմաւորեց փարաքախտ Կոմիտասի «Անուշ»ի հատուածներու բեմադրութիւնը, որը դժբախտաբար եղաւ առաջինն ու վերջինը...»⁴⁸: Այս տեղեկութեան հաւաստիութիւնը Կոմիտասի աշակերտների միջոցով ժամանակին փորձել է ճշգրտել Աթայեանը, ըստ որի՝ «...Կոմիտասը գրել է մի շարք տեսարաններից առանձին երգեր-արիաներ, որոնք ցուցադրելիս նա շարունակ շեշտել է, թէ դեռ վերջնականապէս աւարտուած գործեր չեն»⁴⁹: Ի վերջոյ, հեղինակին յաջողում է պարզել, որ Պրտի-Շանում բեմադրուած «Անուշ»ը ո՛չ թէ Կոմիտասի հեղինակածն է եղել, այլ նոյն պոեմի հիման վրայ Յակոբ Սիրունու կազմած երգախառն դրաման, որը 1919ի Փետրուարի 16ին բեմադրել էր Մկրտիչ Զանանը՝ դեռեւս 1910ին նման մի ներկայացման համար Վարդան Սարգսեանի գրած մեներգերով ու խմբերգերով, որոնց մի մասը յետագայում՝ 1937ին, տպագրուել է Փարիզում⁵⁰: Վերը նշուած տեղեկութիւնն առկայ է նաեւ Սիրունու յուշերում՝ գրուած ամենայն հայոց բանաստեղծի Կ. Պոլիս այցելութեան առթիւ. «Թումանեան լսել էր, թէ երկու փարի առաջ, 1919ին թատերախաղի վերածել էի իր «Անուշը», որ երկիցս ներկայացուած էր Պոստոյ մէջ, Վարդան Սարգսեանի յորինած եղանակներով», իսկ դրա յղման մէջ գրուած է. «Անուշը» Պոլսում բեմադրուել է 1919 թ. Փետրուարի 16ին Փթի Շանի յայտնի թատրոնում: ... Ռեժիսորը եղել է Մկրտիչ Զանանը»⁵¹: Այսինքն՝ փաստօրէն Աղանի Մետրոպեանի վերոնշեալ յուշերում թիրիմացաբար Կոմիտասին է վերագրուել նրա սաներից՝ Սարգսեանի յորինած եղանակներով եւ Սիրունու գրած բեմագրով «Անուշ» օպերայի բեմադրութիւնը: Վերոնշեալ յուշը հաւաստի վկայում է, որ «Անուշ»ի 1919ի բեմադրութիւնը կապ չունի Կոմիտասի հետ:

Ինչ վերաբերում է Կոմիտասի հեղինակած եւ Աթայեանի յայտնաբերած՝ անաւարտ «Անուշ»ի պահպանուած երգերին, ապա դրանց հիման վրայ 1973ին (բանաստեղծի մահուան 50ամեակի օրը՝ Փետրուարի 23ին) Երեւանի Թումանեանի տուն-թանգարանում կայացած գիտաժողովի ընթացքում տեղի է ունեցել օպերայի կենդանի կատարումը հենց իր՝ անուանի Կոմիտասագէտի պատշաճ բացատրութիւններով հանդերձ: Կոմիտա-

⁴⁸ Աղանի Մետրոպեան, «Կոմիտասի «Անուշ» օպերայէն հատուածներ՝ «Պրտի-Շան»ի ձմեռային թատրոնին մէջ», *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 309-10:

⁴⁹ Աթայեան, *Կոմիտասի «Անուշ» անաւարտ...*, էջ 43-44:

⁵⁰ Անդ:

⁵¹ Յակոբ Ճ. Սիրունի, «Բարի շունչը, զոր մեզ բերաւ Թումանեան», *Թումանեանը ժամանակակիցների յուշերում*, էջ 814, 975:

սի «Անուշ»ը կրկնուել է Արուեստի աշխատողների հանրապետական տանը՝ ՀՍՍՀ ԳԱ Արուեստի ինստիտուտի կազմակերպած յատուկ երեկոյին, ինչպէս նաեւ ցուցադրուել է հեռուստատեսութեամբ: Այդ բացառիկ միջոցառման երաժշտական բաժինն իրագործուել է Կոմիտասի անուան երաժշտանոցի եւ Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանի սաների կատարմամբ: Չնայած «Անուշ»ի անաւարտ լինելու հանգամանքին, դրա կատարման արձագանգները վկայում են, որ ներկաները խորը ակնածանքով եւ մեծ հետաքրքրութեամբ են ունկնդրել այն: Ահա թէ ինչ է գրել այդ մասին Յովակիմեանն իր վերոնշեալ յօդուածում.

Երաժշտագէտ, Կոմիտասի երաժշտական ժառանգութեան հետազոտող Ռոբերտ Աթայեանը, ձեռնարկելով կոմիտասեան «Անուշի» համահաւաք երաժշտութեան ուսումնասիրմանը, այնքան խորացաւ այդ աշխատանքում, որ կազմակերպեց նաեւ նրա մեղեդիական հատուածների ցուցադրում ուսանողների ուժերով: Ի մի հաւաքելով օպերայի անարտուած մեներգերն ու խմբերգերը, նա քանիցս կազմակերպեց «Անուշ» օպերայի համերգային ներկայացում՝ հեռուստատեսութեամբ եւ առանձին վայրերում, դրանով իսկ ամփոփ պատկերացում տալով Կոմիտասի անձանօթ ստեղծագործութեան մասին: Ամէնից գրաւիչը, թերեւս, Թումանեանի տուն-թանգարանում կայացած համերգային կատարումն էր՝ բանաստեղծի մահուան 50ամեակի առթիւ հրաւիրուած գիտական նստաշրջանում: 1973 թ. Մարտի 23ին, օպերան գրուելուց վեց-եօթ տասնամեակ անց, Թումանեանի յարկի տակ, առաջին անգամ, յորախոթին ներկայ գտնուողների, ինչեցին Անուշի եւ Սարոյի մեներգերը եւ մի շարք խմբերգեր: Ռ. Աթայեանի հանգամանալից ծանօթութիւնից յետոյ հանդէս եկան ուսանողներ Արաքսի Մանսուրեանը (Անուշ), Արզաս Ոսկանեանը (Սարո), Լ. Աբրահամեանը, Ս. Աղեանը, Զ. Մանուկեանը եւ Շ. Մկրտչեանը (երգեցիկ խումբ)»⁵²:

Կարծում ենք, որ այժմ նոյնպէս հնարաւոր կը լինէր նորովի իրագործել այդ հոյակապ մտայղացումը, մանաւանդ որ համապատասխան անհրաժեշտ նիւթերն արդէն 1981ին տպագրուել են Աթայեանի վերոնշեալ յօդուածին կից: Գուցէ անհրաժեշտ կը լինի վերախմբագրել այս ամէնն ու նորովի բեմադրել այն՝ Կոմիտասի ստեղծագործութիւնը յաւուր պատշաճի ներկայացնելու նպատակով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, Յովհաննէս Թումանեանի «Անուշ» պոեմի յենքով հայոց առաջին ազգային օպերան ստեղծելու ուղղութեամբ Կոմիտասի կատարած հսկայական աշխատանքը՝ բնիկ հայկական թեմայով, հայ ժողովրդական լեզուով եւ դասական օպերային սկզբունքներով ազգային երաժշտական ներկայացում ստեղծելու խորապէս մտածուած առաջին փորձն է: Այդ տե-

⁵² Յովակիմեան, էջ 251-52:

սակեւից, նոյնիսկ անաւարտ վիճակում, Կոմիտասի «Անուշ» օպերան գեղարուեստական եւ պատմական բացառիկ կարեւոր նշանակութիւն ունի:

HOVHANNES TUMANYAN'S POEM "ANUSH" AND
THE HOMONYMOUS UNFINISHED OPERA BY KOMITAS
(SUMMARY)

ARPI VARDUMYAN
avardumyan8@gmail.com

The first version of the poem "Anush" by Tumanyan was published in 1892 in Moscow, in the second volume of his poems. As is well known, in the early 1900s, the author completely revised all his poems, including "Anush". This collection was published in Tbilisi in 1903, and after reading it, Komitas had the idea of creating an opera based on the poem "Anush".

Komitas had received a fundamental musical education in Berlin, where he became acquainted with the principles of musical theater, the opera genre and the laws of classical opera. He decided to write an opera based on the poem "Anush", since this plot most closely corresponded to his plan to create a truly folk vocal and musical work. He intended to subordinate the laws of classical opera to the spirit of Armenian folk musical thinking; in the end a new type of musical work would result, which might be a synthesis of these two styles.

Unfortunately, Komitas's plan remained unfinished, although there are more than 20 arias, duets, choral and orchestral parts from this opera.

Based on this material, in 1973, in connection with the 50th anniversary of Tumanyan's death (March 23), the opera "Anush" by Komitas was staged in Yerevan by singers-students of the Komitas Conservatory and the Romanos Melikyan College of Music. The performance was a great success; it was repeated in the Armenian House of Artists –at the end of the Scientific Conference at the Institute of Art of the Armenian Academy of Sciences; it was even broadcast on television.